ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 839-Ա/2 « 31 » հուլիսի 2017 թ.

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ԴՐԱ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Գիտական աստիճան ունեցող անձանց հավելավճարը կենսաթոշակին ավելացնելու և դրա ֆինանսական բաղադրիչի գնահատման մասին հարցերը քննարկելու նպատակով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 12-ի N 1579-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կանոնադրության 14 կետի «դ» և «ժէ» ենթակետերը՝

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ ԵՄ

1. Ձևավորել գիտական աստիճան ունեցող անձանց հավելավճարը կենսաթոշակին ավելացնելու հարցի քննարկման հանձնաժողով և հաստատել դրա կազմը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ՝ Սամվել Հարությունյանին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
ՀՀ կրթության և գիտության նախարարի
2017 թ. հուլիսի 31-ի N 839-Ա/2 հրամանի

ԿԱԶՄ

ԳԻՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՎԵԼԱՎՃԱՐԸ ԿԵՆՍԱԹՈՇԱԿԻՆ ԱՎԵԼԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Հ/h	Ազգանուն, անուն	Պետական մարմին/կազմակերպություն, պաշտոն
1.	Մարդոյան Լևոն	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ղեկավար (հանձնաժողովի նախագահ)
2.	Շուքուրյան Յուրի	ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի փոխնախագահ (համաձայնությամբ)
3.	Ասատրյան Ժորա	ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի բյուջետային ծախսերի ֆինանսական ծրագրավորման վարչության խորհրդատու (համաձայնությամբ)
4.	Սահարյան Արամ	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության պետ
5.	Մկրտչյան Ռոզա	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի կենսաթոշակային ապահովության վարչության պետի տեղակալ (համաձայնությամբ)
6.	Պողոսյան Պարույր	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության պետական ծառայության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման վարչության տնտեսագիտական բաժնի պետ (համաձայնությամբ)
7.	Ղարիբյան Կարեն	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության գիտական քաղաքականության և զարգացման ծրագրերի բաժնի պետ
8.	Խաչատրյան Աիդա	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի գիտական քաղաքականության վարչության գիտական տեղեկատվության և վերլուծության բաժնի պետ
9.	Գալստյան Տիգրան	ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական և հաշվապահական հաշվառման բաժնի պետ